

ՈՐՈՇՈՒՄ

23 նոյեմբերի 2012 թվականի.

թիվ 96

քաղ. Մոսկվա

«Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազոր մարմինների միջեւ փոխգործակցության, այդ թվում՝ տեղեկատվական փոխգործակցության կարգի մասին

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հաստատել ««Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազոր մարմինների միջեւ փոխգործակցության, այդ թվում՝ տեղեկատվական փոխգործակցության» կարգը (կցվում է):

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո՝ բացառությամբ սույն Որոշման 1-ին կետում նշված կարգի III – VI բաժինների:

Սույն Որոշման 1-ին կետում նշված կարգի III – VI բաժիններն ուժի մեջ են մտնում Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի՝ «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի 29-րդ եւ 30-րդ հոդվածներով նախատեսված պահանջների կատարման փաստն ամրագրող որոշումն ընդունելուց եւ գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգը սահմանող ու դրա հրապարակման համար պատասխանատվություն նախատեսելու մասին համաձայնագիրը գործողության մեջ

դնելուց հետո, նշված ակտերն ուժի մեջ մտնելու՝ ավելի ուշ ամսաթվից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամները՝

Բելառուսի Հանրապետությունից	Ղազախստանի Հանրապետությունից	Ռուսաստանի Դաշնությունից
--	---	-------------------------------------

Ս. Ռումաս

Կ. Կելիմբետով

Ի. Շուվալով

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի
խորհրդի՝ 2012 թվականի նոյեմբերի 23-ի
թիվ 96 որոշմամբ

ԿԱՐԳ

«Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի շրջանակներում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազոր մարմինների միջեւ փոխգործակցության, այդ թվում՝ տեղեկատվական փոխգործակցության

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կարգը մշակվել է «Մրցակցության միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի դեկտեմբերի 9-ի համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 29-րդ հոդվածի 1-ին կետի 8-րդ ենթակետի հիման վրա եւ կիրառվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եւ Մաքսային միության ու Միասնական տնտեսական տարածքի անդամ պետությունների լիազոր մարմինների (այսուհետ՝ Կողմեր) փոխգործակցության դեպքում:

2. Սույն Կարգով սահմանվում է Հանձնաժողովի եւ Կողմերի լիազոր մարմինների փոխգործակցության մեխանիզմը, ինչպես նախքան Հանձնաժողովին Կողմերի տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) կողմից Համաձայնագրի III բաժնով սահմանված՝ երկու կամ ավելի Կողմերի տարածքում անդրսահմանային շուկաներում մրցակցության միասնական կանոնները (այսուհետ՝ մրցակցության կանոններ) պահպանելու նկատմամբ հսկողության հետ կապված

լիազորությունների փոխանցումը, այնպես էլ նշված լիազորությունները փոխանցելուց հետո:

3. Հանձնաժողովի եւ Կողմերի լիազոր մարմինների փոխգործակցությունն իրականացվում է հետեւյալ դեպքերում՝

Հանձնաժողովի կողմից հսկողություն՝ Կողմերի լիազոր մարմինների կողմից մրցակցության կանոնների պահպանումն ապահովելու նկատմամբ

Կողմերի լիազոր մարմինների կողմից որոշման կայացում՝ մրցակցության կանոնների խախտման մասին դիմումները (նյութերը) (այսուհետ՝ դիմումներ) Հանձնաժողովի քննությանը փոխանցելու վերաբերյալ

Հանձնաժողովի կողմից որոշման կայացում՝ Կողմերի լիազոր մարմիններին քննության համար դիմումները փոխանցելու վերաբերյալ

Հանձնաժողովի կողմից մրցակցության կանոնների խախտման դեպքերի ուսումնասիրություն,

Հանձնաժողովի կողմից մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերի քննություն:

4. Հանձնաժողովի եւ Կողմերի լիազոր մարմինների փոխգործակցությունը կարող է իրականացվել սույն Կարգի VIII բաժնով նախատեսված այլ ձեւերով:

II. Փոխգործակցությունը Կողմերի լիազոր մարմինների կողմից մրցակցության կանոնների պահպանումն ապահովելու նկատմամբ Հանձնաժողովի կողմից հսկողություն իրականացնելիս

5. Նախքան Կողմերի տնտեսավարող սուբյեկտների (շուկայում գործող սուբյեկտների) կողմից մրցակցության կանոնները պահպանելու նկատմամբ հսկողության մասով Կողմերի լիազորությունները Հանձնաժողովին փոխանցելը, Հանձնաժողովի պատասխանատու կառուցվածքային ստորաբաժանումը, այն դեպարտամենտների թվից, որոնց աշխատանքը վերահսկում է մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման ոլորտում Հանձնաժողովի գործառույթներն

իրականացնող կոլեգիայի անդամը (այսուհետ՝ պատասխանատու դեպարտամենտ), հսկողություն է իրականացնում Կողմերի լիազոր մարմինների կողմից մրցակցության կանոնների պահպանումն ապահովելու նկատմամբ:

Հսկողությունը կազմակերպելու շրջանակներում Կողմերի լիազոր մարմինները Հանձնաժողով են ուղարկում մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության խախտման վերաբերյալ գործերի հարուցման մասին որոշումների պատճենները հետեւյալ դեպքերում՝

դիմումատուն եւ(կամ) անձը, որի հետ կապված ներկայացվել է դիմումը, գործունեություն է իրականացնում Համաձայնագրի երկու կամ ավելի Կողմերի տարածքներում,

դիմումներում առկա են երկու կամ ավելի Կողմերի տարածքներում մրցակցության կանոնների խախտման մասին վկայող տվյալներ:

6. Սույն Կարգի 5-րդ կետում նշված որոշումների պատճենները Կողմերի լիազոր մարմինների կողմից ուղարկվում են Հանձնաժողով որոշումներն ընդունելու ամսաթվից ոչ ուշ, քան 10 օրացուցային օր հետո՝ դրանց կցելով ընդունման համար հիմք հանդիսացած դիմումները:

7. Մրցակցության եւ հակամենաշնորհային կարգավորման ոլորտում Հանձնաժողովի գործառույթների իրականացումն ապահովող կոլեգիայի անդամը (այսուհետ՝ Կոլեգիայի անդամ), իրավունք ունի հարցումներ ուղարկելու Կողմերի լիազոր մարմիններին մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության խախտման վերաբերյալ նրանց ընդունած որոշումները վերլուծելու նպատակով:

8. Հարցման մեջ նշվում են՝

հարցման նպատակը,

Հանձնաժողով ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունների ցանկը,

տեղեկությունները ներկայացնելու ժամկետը, բայց ոչ պակաս, քան հարցումն ստանալու ամսաթվից 5 աշխատանքային օրվա ընթացքում եւ ոչ ավելի, քան

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով նախատեսված ժամկետը, որը հաստատվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1 որոշմամբ:

Հանձնաժողովի կողմից ստացված տեղեկությունները վերլուծվում են պատասխանատու դեպարտամենտի աշխատակիցների կողմից եւ Կոլեգիայի անդամի ստորագրությամբ ուղարկվում են Կողմերի լիազոր մարմիններին ի գիտություն:

III. Փոխգործակցությունը Կողմերի լիազոր մարմինների կողմից դիմումները Հանձնաժողովի քննությանը փոխանցելու մասին որոշում կայացնելիս

9. Դիմումը Հանձնաժողովի քննությանը ներկայացնելու մասին որոշումը կայացվում է Կողմի լիազոր մարմնի կողմից՝ դրա քննության ցանկացած փուլում, որն իրականացվում է՝ հաշվի առնելով Կողմի օրենսդրությամբ սահմանված առանձնահատկությունները:

Նման որոշում կայացնելու դեպքում Կողմի լիազոր մարմինը համապատասխան գրություն է ներկայացնում Հանձնաժողով:

10. Գրության մեջ նշվում են՝

դիմումը ներկայացնող մարմնի անվանումը,

այն տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) անվանումը, որի գործողությունները պարունակում են Մրցակցության կանոնների խախտման հատկանիշներ,

մրցակցության կանոնների խախտման հատկանիշներ պարունակող գործողությունների (անգործության) նկարագրությունը,

այն ապրանքային շուկայի սահմանները, որում հայտնաբերվել են խախտման հատկանիշները,

Համաձայնագրի այն նորմերը, որոնք, լիազոր մարմնի կարծիքով, խախտվել են:

11. Գրությանը կցվում են այն փաստաթղթերը, որոնց քննության ընթացքում հայտնաբերվել են մրցակցության կանոնների խախտման հատկանիշները եւ որոնք, Կողմի լիազոր մարմնի կարծիքով, անհրաժեշտ են՝ գրությունը քննության առնելու համար:

12. Կողմի լիազոր մարմնի կողմից սույն Կարգի 10-րդ եւ 11-րդ կետերում նշված գրությունը Հանձնաժողով ուղարկելը հիմք է համարվում Կողմի լիազոր մարմնի կողմից դիմումի քննությունը դադարեցնելու համար, նախքան Կոլեգիայի անդամի կողմից մրցակցության կանոնների խախտման ուսումնասիրություն անցկացնելու կամ լիազոր մարմիններին ըստ ենթակայության դիմումը փոխանցելու կամ դիմումը վերադարձնելու մասին որոշում ընդունելը, որը նախատեսված է մրցակցության կանոնների խախտման մասին դիմումների (նյութերի) քննության կարգով:

13. Կողմի լիազոր մարմինը տեղեկացնում է դիմումատուին իր դիմումը Հանձնաժողովին հանձնելու մասին՝ այն Հանձնաժողով ուղարկելու օրվանից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում:

14. Դիմումն ստանալու օրվանից հետո 5 աշխատանքային օրը չգերազանցող ժամկետում Կոլեգիայի անդամը ուղեկցող նամակով ծանուցում է Կողմերի լիազոր մարմիններին եւ դիմումատուին նշված դիմումը քննության ընդունելու մասին:

15. Կոլեգիայի անդամի կողմից մրցակցության կանոնների խախտման ուսումնասիրություն անցկացնելու մասին, կամ լիազոր մարմիններին դիմումները (նյութերը) ըստ ենթակայության փոխանցելու մասին որոշում ընդունելը, որը նախատեսված է մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ դիմումների (նյութերի) քննության կարգով, հիմք է համարվում Կողմի լիազոր մարմնի կողմից դիմումի քննությունը դադարեցնելու համար:

IV. Փոխգործակցությունը դիմումները Հանձնաժողովի կողմից լիազոր մարմինների քննությանը փոխանցելու վերաբերյալ որոշում կայացնելու դեպքում

16. Հանձնաժողովի կողմից դիմումը Կողմի լիազոր մարմնի քննությանը փոխանցելու մասին որոշումն ընդունվում է դրա քննության ցանկացած փուլում՝ այն դեպքում, երբ Հանձնաժողովը որոշում է, որ մրցակցության կանոնների խախտման կանխումը վերապահվում է Կողմի լիազոր մարմնի իրավասությանը:

Նման որոշում ընդունելու դեպքում պատասխանատու դեպարտամենտի աշխատակիցը համապատասխան գրություն է նախապատրաստում Կողմի լիազոր մարմին ներկայացնելու համար, որը ստորագրվում է Կոլեգիայի անդամի կողմից:

17. Գրության մեջ նշվում են՝

այն տնտեսավարող սուբյեկտի (շուկայում գործող սուբյեկտի) անվանումը, որի գործողությունները (անգործությունը) պարունակում են մրցակցության կանոնների խախտման հատկանիշներ,

Մրցակցության կանոնների խախտման հատկանիշներ պարունակող գործողությունների (անգործության) նկարագրությունը,

այն ապրանքային շուկայի սահմանները, որում հայտնաբերվել են խախտման հատկանիշները:

18. Գրությանը կցվում են բոլոր այն փաստաթղթերը, որոնց քննության ընթացքում հայտնաբերվել են մրցակցության կանոնների խախտման հատկանիշները եւ որոնք, Հանձնաժողովի կարծիքով, անհրաժեշտ են՝ Կողմի լիազոր մարմնի կողմից գրությունը քննության առնելու համար:

19. Կոլեգիայի անդամը դիմումն ուղարկելու ամսաթվից 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմումատուին ծանուցում է Կողմի լիազոր մարմնին դիմումը փոխանցելու վերաբերյալ:

V. Փոխգործակցությունը Հանձնաժողովի կողմից մրցակցության կանոնների խախտման ուսումնասիրություն անցկացնելու դեպքում

20. Հանձնաժողովի կողմից մրցակցության կանոնների խախտման ուսումնասիրություն անցկացնելիս Կոլեգիայի անդամն իրավունք ունի Կողմի լիազոր մարմիններին ուղարկելու հարցումներ տեղեկությունների եւ փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ:

21. Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը ձեւակերպվում է գրավոր եւ պարունակում է՝

հարցման նպատակը,

համապատասխան գործի համարը (առկայության դեպքում), որի առնչությամբ տեղեկություններ են հարցվում, իրավախախտման եւ դրան առնչվող այլ փաստերի մանրամասն նկարագրությունը, արարքի իրավաբանական որակումը՝ Համաձայնագրին համապատասխան,

տվյալներ այն անձի մասին, որի առնչությամբ քննության է առնվում համապատասխան գործը (թվարկված տեղեկություններն իր տնօրինության տակ ունենալու դեպքում)՝

Ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, զբաղմունքը, ծննդյան վայրն ու ամսաթիվը,

իրավաբանական անձանց համար՝ անվանումը եւ գտնվելու վայրը,

տեղեկությունները ներկայացնելու ժամկետը, բայց ոչ պակաս, քան հարցումն ստանալու ամսաթվից 10 աշխատանքային օրվա ընթացքում եւ ոչ ավելի, քան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով նախատեսված ժամկետը, որը սահմանվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1 որոշմամբ,

ներկայացման ենթակա տվյալների ցանկը:

22. Տեղեկություններ եւ փաստաթղթեր ներկայացնելու մասին հարցմանը կցվում են այն առկա փաստաթղթերի պատճենները, որոնց վերաբերյալ հարցման տեքստում առկա են հղումներ, ինչպես նաեւ դրա պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

23. Տեղեկություններ եւ փաստաթղթեր ներկայացնելու նպատակով Կողմերի լիազոր մարմիններն ապահովում են հարցվող տեղեկությունների եւ փաստաթղթերի հավաքագրումը՝ Կողմերի ազգային օրենսդրությանը համապատասխան:

24. Հարցվող տեղեկությունները ներկայացնելու անհնարինության դեպքում, այդ թվում՝ հարցման մեջ սահմանված ժամկետում, Կողմի լիազոր մարմինը հարցումն ստանալու ամսաթվից 5 աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Հանձնաժողովին հարցվող տեղեկությունները ներկայացնելու անհնարինության մասին, այդ թվում՝ հարցման մեջ սահմանված ժամկետներում՝ նշելով հարցվող տեղեկությունները ներկայացնելու անհնարինության պատճառները:

25. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ նախորդ հարցումը կատարելու շրջանակներում ստացված տեղեկությունները ճշգրտելու անհրաժեշտության դեպքում Կողմի լիազոր մարմին կարող է ուղարկվել տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ կրկնակի հարցում:

VI. Փոխգործակցությունը Հանձնաժողովի կողմից Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերը քննության առնելիս

26. Մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերը քննության առնելիս Հանձնաժողովն իրավունք ունի հարցումներ ուղարկելու Կողմի լիազոր մարմիններ տեղեկությունների եւ փաստաթղթերի տրամադրման վերաբերյալ:

27. Տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ հարցումը ձեւակերպվում է գրավոր եւ պարունակում է՝

հարցման նպատակը,

համապատասխան գործի համարը (առկայության դեպքում), որի առնչությամբ տեղեկություններ են հարցվում, իրավախախտման եւ դրան առնչվող այլ փաստերի մանրամասն նկարագրությունը, արարքի իրավաբանական որակումը՝ Համաձայնագրին համապատասխան,

տվյալներ այն անձի մասին, որի առնչությամբ քննության է առնվում համապատասխան գործը (եթե թվարկված տեղեկություններն առկա են նրա տնօրինության տակ)՝

Ֆիզիկական անձանց համար՝ ազգանունը, անունը, հայրանունը, բնակության վայրը կամ գտնվելու վայրը, քաղաքացիությունը, զբաղմունքը, ծննդյան վայրն ու ամսաթիվը,

իրավաբանական անձանց համար՝ անվանումը եւ գտնվելու վայրը,

տեղեկությունները ներկայացնելու ժամկետը, բայց ոչ պակաս, քան հարցումն ստանալու ամսաթվից 5 աշխատանքային օրվա ընթացքում եւ ոչ ավելի, քան Եվրասիական տնտեսական հանձնաժողովի աշխատանքի կանոնակարգով նախատեսված ժամկետը, որը սահմանվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 18-ի թիվ 1 որոշմամբ,

ներկայացման ենթակա տվյալների ցանկը:

28. Տեղեկությունները եւ փաստաթղթերը ներկայացնելու մասին հարցմանը կցվում են այն առկա փաստաթղթերի պատճենները, որոնց վերաբերյալ հարցման տեքստում առկա են հղումներ, ինչպես նաեւ հարցման պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:

29. Կողմի լիազոր մարմինը հարցման մեջ սահմանված ժամկետում տրամադրում է իր տնօրինության տակ գտնվող տեղեկությունները:

30. Հանձնաժողովի կողմից մրցակցության կանոնների խախտման վերաբերյալ գործերը քննության առնելիս Կողմի տնտեսավարող սուբյեկտին (շուկայում գործող սուբյեկտին) տեղեկությունները եւ փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ հարցում ուղարկելու դեպքում Հանձնաժողովը միաժամանակ նման

հարցման պատճենն ուղարկում է այն Կողմի լիազոր մարմին, որի տարածքում գրանցված է տնտեսավարող սուբյեկտը (շուկայում գործող սուբյեկտը):

31. Լրացուցիչ տեղեկություններ ստանալու կամ նախորդ հարցումը կատարելու շրջանակներում ստացված տեղեկությունները ճշգրտելու անհրաժեշտության դեպքում Կողմի լիազոր մարմին կարող է ուղարկվել տեղեկություններ եւ փաստաթղթեր տրամադրելու վերաբերյալ կրկնակի հարցում:

VII. Հանձնաժողովի եւ Կողմերի լիազոր մարմինների կողմից տեղեկությունների փոխանակումը

32. Մրցակցության կանոնները կիրառելու նպատակով Հանձնաժողովը եւ Կողմի լիազոր մարմինները , հաշվի առնելով Կողմերի օրենսդրությամբ նախատեսված առանձնահատկությունները, համատեղ հուշագրով սահմանում են Կողմերի լիազոր մարմինների եւ Հանձնաժողովի բաց տեղեկությունների ծավալն ու ցանկը:

Կողմերի լիազոր մարմինների եւ Հանձնաժողովի բաց տեղեկությունները տեղադրվում են դրանց պաշտոնական կայքերում:

33. Բաց տեղեկություններին ներկայացվող պահանջներ են համարվում, այդ թվում՝

ներկայացվող տեղեկությունների արժանահավատությունը, ամբողջականությունն ու արդիականությունը,

ներկայացվող տեղեկություններից սահմանափակ տարածման տեղեկություններին վերաբերող տվյալները հանելը:

34. Կողմերի լիազոր մարմինների եւ Հանձնաժողովի գործունեությանն ու դրանց կազմակերպական կառուցվածքին առնչվող տեղեկությունների, հասցեատեղեկատվական տեղեկությունների, դրանց գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերի, իրականացվող ծրագրերի եւ նախագծերի վերաբերյալ տեղեկությունների, ինչպես նաեւ Կողմերի լիազոր

մարմինների եւ Հանձնաժողովի գործունեության արդյունավետության նպատակային եւ փաստացի ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների տեղադրումն օպերատիվ կերպով է իրականացվում:

35. Կողմերի լիազոր մարմինների եւ Հանձնաժողովի գաղտնի տեղեկությունների ցանկը, գաղտնի տեղեկություններ պարունակող փաստաթղթերի ձեւակերպման եւ այդ փաստաթղթերի օգտագործման, ինչպես նաեւ գաղտնի տեղեկությունների պաշտպանության եւ դրանց հրապարակման համար պատասխանատվության կարգերը սահմանվում են համապատասխան համաձայնագրով:

VIII. Հանձնաժողովի եւ Կողմերի լիազոր մարմինների փոխգործակցության այլ ձեւեր

36. Մրցակցության եւ Կողմերի մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության փորձի փոխանակման, ուսումնասիրության անցկացման, ինչպես նաեւ պրակտիկ գործունեության արդյունքները քննարկելու նպատակներով՝ տարին առնվազն մեկ անգամ Կոլեգիայի անդամի ղեկավարությամբ անցկացվում են արտագնա խորհրդակցություններ Կողմերից յուրաքանչյուրի տարածքում՝ Կողմերի լիազոր մարմինների ներկայացուցիչների հրավերքով:

37. Հանձնաժողովը եւ Կողմերի լիազոր մարմինները Կողմերի լիազոր մարմինների աշխատակիցների եւ Հանձնաժողովի միջազգային ծառայողների՝ մրցակցային քաղաքականության եւ հակամենաշնորհային կարգավորման ոլորտում մասնագիտական մակարդակն ու որակավորումը բարձրացնելու նպատակով՝ իրենց աշխատակիցների համար կազմակերպում եւ (կամ) անցկացնում են համատեղ ուսուցողական միջոցառումներ (սեմինարներ, համաժողովներ, վերապատրաստման դասընթացներ):

38. Կողմերի գործող մրցակցային (հակամենաշնորհային) օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու դեպքում՝ Կողմերի լիազոր մարմինները դրանց

պաշտոնական հրապարակման ամսաթվից 5 աշխատանքային օրվա ընթացքում
դրա մասին ծանուցում են Հանձնաժողովին: